

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

➤ Ծանոթագրություն 1. «Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում»

3.1.1. Իրավական դաշտ.

1) ներդրումային ընկերության հիմնական գործունեությունը,

«Ալֆասերթյուրիթիզ» ՍՊԸ գործառնությունների հիմնական տեսակներ են ՀՀ պարտատոմսերի շուկայում

-ներդրումային գործունեություն

- բրոքերային գործառնությունների իրականացում:

2) գործարար միջավայրը,

-ՀՀ կենտրոնական բանկ

-ՀՀ բանկեր

-ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձիք:

3) եթե ներդրումային ընկերության խմբի անդամ է, ապա խմբի իրավական կառուցվածքը:

«Ալֆասերթյուրիթիզ» ՍՊԸ որևէ խմբի անդամ չէ, չունի ներկայացուցչություններ և մասնաճյուղեր:

3.1.2. Կորպորատիվ կառավարում.

«Ալֆասերթյուրիթիզ» ՍՊԸ-ն շահույթ ստանալու նպատակով ներդրումային գործունեություն իրականացնող իրավաբանական անձ է: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունիսի 27-ի թիվ ԾՕՀ Ա որոշման Ընկերության կանոնադրությունը (նոր խմբագրությամբ) գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում՝ գրանցման վկայական թիվ 8, գրանցման անսաթիվ՝ 27.06.08թ.:

Համաձայն Ընկերության կանոնադրության Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 250.000.000 ՀՀ դրամ:

Ընկերության ֆիրմային անվանումն է «Ալֆասերթյուրիթիզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, կրճատ՝ «Ալֆասերթյուրիթիզ» ՍՊԸ:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Հալաբյան փ. 34 շենք, 52 բն.

1) խորհրդի կառուցվածքը, կազմը,

Ընկերության կառավարման մարմիններ են մասնակիցների ընդհանուր ժողովը և գործադիր տնօրենը: Ընկերության ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է ընկերության միակ մասնակիցը, որն իր իրավասությունների սահմաններում ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

2) տնօրինության կառուցվածքը, կազմը,

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գործադիր տնօրենը: Ընկերության Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում գործունեության ղեկավարման հարցերը, որոնք Կանոնադրությամբ և Օրենսդրությամբ վերապահված չեն ընդհանուր ժողովի իրավասությանը:

3) սեփականության կառուցվածքը, բաժնետերերի/մասնակիցների քանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջում,

«Ալֆասերթյուրիթիզ» ՍՊԸ-ն 31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ ունի մեկ բաժնետեր:

4) նշանակալից մասնակիցների անունները/անվանումները,

«Ալֆասերթյուրիթիզ» ՍՊԸ-ի նշանակալից մասնակիցն է Մարինա Փսոմասը 100 % մասնաբաժնով:

5) ղեկավարների վարձատրության քաղաքականությունը,

Դեկլարանների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը հանդիսանում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը:

Դեկլարանների կատարած աշխատանքների գնահատումն իրականացվում է հիմք ընդունելով՝

-Ընկերության ընթացիկ գործունեության արդյունավետ կառավարումը

-Ընկերության կապիտալի և ակտիվների շահութաբերության մակարդակները

-ներքին իրավական ակտերի և այլ որոշումների պատշաճ կատարումը

-Ընկերության հեռանակարային զարգացման միտումները և այլ:

6) արտաքին աուդիտին վճարները:

Ընկերության 2013թ-ի ֆինանսական գործունեության տարեկան աուդիտը իրականացրել է «Աուդիտսերվիս» ՄՊԸ աուդիտորական ընկերությունը, որի դիմաց վճարումը կատարվել է համաձայն կողմերի միջև կնքված պայմանագրի:

3.2 Ծանոթագրություն 2. «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»

Ընկերության հաշվապահական հաշվառումը վարվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշումով հաստատված Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին, Ներդրումային ընկերությունների հաշվային պլանի կիրառման հրահանգին և ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

1) ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը,

«Ալֆասերթյուրիթիզ» ՄՊԸ-ի 2013թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմված են համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվային ակտերի, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ) հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից ընդունված ստանդարտների և դրանց մեկնաբանությունների:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվել և ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի կողմից հաստատված «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլան»-ի և «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգ»-ի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերի:

Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները կազմելիս, բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության, իրականացնում է հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա, ըստ որի գործառնությունները ճանաչվում են դրանց կատարման պահին և հաշվառման գրանցամատյաններում գրանցվում են ու ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում դրանց կատարման ժամանակաշրջանում:

2) համախմբման սկզբունքները (համախմբման դեպքում),

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմված են հետևյալ սկզբունքներին համաձայն.

-Անընդհատություն. Ընկերությունը չի պատրաստվում դադարեցնել կամ կրճատել իր գործունեությունը տեսանելի ապագայում;

-Էականություն. Ընկերության ֆինանսական հաշվետվություններում բացահայտված են բոլոր այն տեղեկատվությունները, որոնց չբացահայտումը կարող է ազդել օգտագործողների տնտեսական որոշումներ ընդունելու վրա;

-Հետևողականությունը. Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը չի փոփոխվում հաշվետու ժամանակաշրջանից մյուսը, եթե էական փոփոխություններ չեն տեղի ունեցել ընկերության գործառնությունների բնույթում;

-Հաշվեգրում. տնտեսական գործառնությունների արդյունքները գրանցվում են ճանաչման պահին՝ անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետներից և արտացոլվում են այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են;

-Համադրելիություն. Ընկերության տարբեր ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները պետք է համադրելի լինեն:

3) եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը,

Ընկերության կողմից գործարքների կատարման ընթացքում ստացված կամ ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Ընկերությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով (օրեկան կտրվածքով), անկախ

եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, հատուցման իրական արժեքով, հաշվեկշռի ամսաթվի դրությամբ, գործարքի ավարտման աստիճանի հիման վրա` ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընկերությունը ոչ տոկոսային ծախսերը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման սկզբունքով` հիմք ընդունելով համապատասխան պայմանագիրը կամ նախորդ ժամանակաշրջանի վճարումները, ընդ որում, ոչ տոկոսային ծախսերի գծով, հաշվեգրումները կատարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

4) արտարժույթային գործառնությունների հաշվառումը,

Ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարում և ֆինանսական հաշվետվությունները կազմում և ներկայացնում է ՀՀ արժույթով: Արտարժույթով արտահայտված գործառնությունները Ընկերությունը գրանցում է հաշվետվական արժույթով, կիրառելով գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից տվյալ արտարժույթի նպատմամբ սահմանված փոխարժեքը: Սկզբնական ճանաչումից հետո հոդվածները վերագնահատվում են տվյալ օրվա փակման փոխարժեքով:

5) հարկեր (ընթացիկ և հետաձգված),

Ընկերությունում շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով հաշվառումը տարվում է ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

Հաշվետվու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համաձայն` յուրաքանչյուր ամսվա համար հաշվեգրվում է շահութահարկի պարտավորությունը շահույթի նկատմամբ ր հաշվետու տարվա վերջին այն ճշգրտվում է և հաշվանցվում շահութահարկի գծով կատարված կանխավճարների հետ:

Հետաձգված հարկերը առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են:

6) ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը,

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը` համապատասխանաբար գումարած կամ հանած գործարքի հետ կապված ծախսումները: Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների` շահույթ կամ վնասիմիջոցով վերաչափվող ֆինանսական ակտիվներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների մասն դասակարգումը կատարվում է դրանց ձեռք բերման պահին` Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա, ինչպես նաև առաջնորդվում է ՀՀ կենտրոնական բանկի որոշումներով, կարգերով, հրամաններով, մեթոդական ուղեցույցերով և հաշվապահական միջազգային ստանդարտներով:

7) դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (բացահայտում են այն քաղաքականությունը, որը կիրառվում է դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը որոշելիս),

Ընկերության կանխիկ դրամական միջոցների փաստացի ներհոսքի (մուտքագրումը) և կամ արտահոսքի (ելքագրումը) ձևակերպումը կատարվում է արժույթների ամվանական արժեքով` ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատշաճ կերպով կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

8) շահույթ կամ վնասիմիջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,

Շահույթ կամ վնասիմիջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերը ձեռք են բերվում գների կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով: Այդ արժեթղթերը սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով և հատագայում վերաչափվում են իրական արժեքով` ելնելով գործող շուկայական գներից: Համապատասխան իրացված և չիրացված օգուտներն ու վնասները գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության շահույթ կամ վնասիմիջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերից ստացված եկամուտներ հոդվածում:

9) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,

Վաճառքի համար մատչելի ֆինանսական արժեթղթերը ձեռք են բերվում անորոշ ժամանակ պահելու նպատակով և կարող են վաճառվել` կախված իրացվելիության պահանջներից կամ տոկոսադրույքի և գների փոփոխություններից: Այդ արժեթղթերի իրական արժեքի փոփոխություններից առաջացած իրացված կամ չիրացված շահույթն ու վնասը արտացոլվում են կապիտալում: Այս արժեթղթերի վաճառքի ժամանակ դրանց իրական արժեքի գծով ճշգրտումները ճանաչվում են որպես վաճառքի համար մատչելի դասակարգված արժեթղթերից շահույթ կամ վնաս ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

<< Այլֆաստեղծությունից >> ՄՊԸ 2013թ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

Ընկերության շահույթ կամ վնասիմիջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերը/ պարտքային արժեթղթեր, բաժնետոմսեր և այլ արժեթղթեր /բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի/, շուկայական արժեքի փոփոխության դեպքում վերագնահատվում են հետևյալ ձևով,

ա/ Ընկերության ֆինանսական դրության մասին հաշվետվությունում առկա շահույթ կամ վնասիմիջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերը պարբերաբար՝ ամիսը մեկ անգամ, ինչպես նաև յուրաքանչյուր վաճառքի դեպքում վերագնահատվում են հաշվի առնելով նրանց շուկայական արժեքի փոփոխությունները, որի արդյունքները արտացոլվում են ֆինանսական դրության մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը կամ արժեթղթի վաճառքի օրը,

բ/ կախված արժեթղթերի թողարկման վայրից, արժեթղթերի շուկայական արժեքների

վերագնահատման համար հիմք են ծառայում թողարկման վայրի ֆոնդային շուկայի տվյալները, ստացված կապի կամ ինտերնետային կապի միջոցներով:

Ընկերության կողմից շահույթ կամ վնասիմիջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ կամ վաճառքի համար մատչելի ՀՀ պետական և ՀՀ ԿԲ կողմից թողարկված պարտատոմսերի իրական արժեքի ճշգրտումները՝ վերագնահատումները կատարվում են յուրաքանչյուր օր հետևյալ ձևով.

ա/ իրականացվում է տոկոսների հաշվեգրումներ, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը

բ/ կատարվում է ՀՀ ԿԲ կողմից տրված մինչև մարում եկամտաբերության կորի

տոկոսադրույքների հիման վրա արժեթղթի գնի ճշտումներ:

Վաճառքի համար մատչելի ՀՀ պետական պարտատոմսերի վերագնահատման արդյունքները արտացոլվում են «Կապիտալի» բաժնի «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվում:

10) ռեպո համաձայնագրերով գործառնություններ,

Ռեպո համաձայնագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրած փոխառությունների դիմաց ապահովություն: Ռեպո համաձայնագրերով տրված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ: Ռեպո համաձայնագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում: Ռեպո համաձայնագրերով ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս:

11) վարկեր և փոխառություններ՝ բանկերին, այլ ֆինանսական կազմակերպություններին, հաճախորդներին,

12) վարկերի և տրամադրված այլ փոխառությունների արժեգրկման գծով կորուստների որոշման և անհուսալի վարկերի և տրամադրված այլ փոխառությունների դուրսգրման հիմունքը,

13) տոկոսների հաշվեգրման դադարեցումը,

Գործող պայմանագրերի շրջանակներում տոկոսների հաշվեգրումը դադարում է, երբ կա բավարար հիմք կարծելու, որ դրանք չեն հավաքագրվի:

14) մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հաշվառումը,

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետ պահվող, երբ Ընկերությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Ընկերության կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ համաձայն դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

15) հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները որպես ակտիվ հաշվառվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով) ՀՀ դրամով: Արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում: Հիմնական միջոցի օգտակար ծառայության ընթացքում դրանց մաշվածության գումարը պարբերաբար բաշխվում է և ճանաչվում է որպես ծախս: Ամորտիզացիոն մասհանումները կատարվում են ելնելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նավթագույն ժամկետներից: Ընկերությունում կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Ընկերության հիմնական միջոցները որպես գրասենյակային սարքավորում կամ կապի ու հաղորդակցության միջոցներ, հաշվողական, համակարգչային, ավտոմատ կառավարման այլ տեխնիկա, այլ հիմնական միջոցներ հաշվառման նպատակով դասակարգելիս առաջնորդվում է՝ ելնելով դրանց օգտագործման նշանակությունից և նպատակներից:

Ոչ նյութական ակտիվները սկզբնապես չափվում են սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պարբերաբար բաշխվում է օգտակար ծառայության ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկի համար կիրառվում է գծային մեթոդը և յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար հաշվարկված ամորտիզացիայի գումարը ճանաչվում է ծախս: Ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությունը:

16) հաճախորդների միջոցներ,

Հաճախորդի միջոցները հաշվառվում են հետհաշվեկշռային հաշիվներով և չեն արտացոլվում ընկերության հաշվեկշռում:

17) կապիտալ և էմիսիոն եկամուտ,

Ընկերության բաժնեմասերի անվանական արժեքների հանրագումարը դասակարգվում է որպես կանոնադրական կապիտալ: Եթե նոր բաժնեմասերի վաճառքի արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնեմասերի անվանական արժեքը, ապա տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար կամ էմիսիոն եկամուտ (հակառակ դեպքում՝ որպես զեղչ):

18) փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը,

Փոխանակման փոխարժեքը որոշվում է՝ Ընկերության տնօրենի կողմից՝ ֆինանսական շումայում տիրող իրավիճակից ելնելով:

19) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը,

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և գուտ գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու ճանաչված գումարները և կա մտադրություն վերջնահաշվարկն իրականացնել գուտ հիմքով, կամ իրավունք ակտիվն ու մարել պարտավորությունը միաժամանակ:

20) ֆինանսական ակտիվների վերադասակարգումները,

Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը կատարվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել սկզբնական գնահատականներում փոփոխություն և վերադասակարգման արդյունքում ֆինանսական հաշվետվությունները կլինեն առավել արժանահավատ:

Ծանոթագրություն 3. «Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

Ծանոթագրություն 3-ը ներկայացնում է տոկոսային և նմանատիպ եկամտի, ծախսերի հիմնական տարրերը.

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	11 511	4 918
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	509 565	438 156
Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից	8 479	
Տոկոսային եկամուտներ սվոպից		935
Ընդամենը	529 555	444 009

	Ժամանակաշրջան	
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և սուսցված վարկերի դիմաց	(966)	(13,577)
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(363 328)	(312,696)
<u>Ընդամենը</u>	(364 294)	(326,273)
<u>Զուտ տոկոսային և մնանադիպ եկամուտ</u>	165 261	117,736

Ծանոթագրություն 4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

Ծանոթագրություն 4-ը ներկայացնում է կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտների և ծախսերի հիմնական տարրերը.

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

**Հաշվետու
ժամանակաշրջան**

**Նախորդ
ժամանակաշրջան**

Ընդամենը

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

**Հաշվետու
ժամանակաշրջան**

**Նախորդ
ժամանակաշրջան**

Սիջնորդավճարների գծով ծախսեր

491

424

Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ

(491)

(424)

➤ **Ծանոթագրություն 5. «Եկամուտ շահաբաժիններ»**

<u>Շահաբաժիններ</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժիններ		
Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ	439	
Արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժիններ		
Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ		

➤ **Ծանոթագրություն 6. «Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից»**

Ծանոթագրություն 6-ը ներկայացնում է առևտրային գործառնություններից զուտ եկամուտների հիմնական տարրերը.

*Աուդիտ Սերվիս աուդիտորական խորհրդատվական ընկերություն, ՆՏ, Երևան, Խորոնացի 47/7, բն. 46,
հեռ/ֆաքս 577 544, email: info@auditservice.am, <http://www.auditservice.am>*

Ծանոթագրություն 7-ը ներկայացնում է այլ գործառնական եկամտի հիմնական տարրերը.

Այլ գործառնական եկամուտ

**Հաշվետու
ժամանակաշրջան**

**Նախորդ
ժամանակաշրջան**

Ընդամենը

- Ծանոթագրություն 8. «Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին»

Ծանոթագրություն 8-ը ներկայացնում է համապատասխան ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված հատկացումները, պահուստներին կատարված մասհանումների վերադարձը և պահուստներին կատարված զուտ մասհանումները:

- Ծանոթագրություն 9. «Ընդհանուր վարչական ծախսեր»

Ծանոթագրություն 9-ի տարրերն են՝

Ընդհանուր վարչական ծախսեր

**Հաշվետու
ժամանակաշրջան**

Նախորդ ժամանակաշրջան

Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով

(27 974)

(17 190)

Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով

(2 169)

Գործուղման և ուսուցման գծով ծախսեր

(1 120)

(5 240)

Անձնակազմի այլ ծախսեր

(3 391)

Գործառնական վարձակալության գծով ծախսեր

(3 985)

(4 000)

Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր

(478)

(1 316)

Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր

(1 440)

(720)

Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր

(1620)

(1 270)

Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր

(5 081)

(6 026)

Տրանսպորտային ծախսեր

(1 480)

(662)

Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր

(197)

(214)

Այլ վարչական ծախսեր	(3682)	(1 566)
	(50 083)	(40 373)

Ընդամենը

2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ալֆասերթյուրիթիզ» ՄՊԸ ներդրումային ընկերության աշխատակիցների թվաքանակը կազմել է 10 մարդ: Մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափն է 233.000 ՀՀ դրամ:

➤ **Ծանոթագրություն 10. «Այլ գործառնական ծախսեր»**

Ծանոթագրություն 10-ի տարրերն են՝

<u>Այլ գործառնական ծախսեր</u>	<u>Հաշվետու ժամանակաշրջան</u>	<u>Նախորդ ժամանակաշրջան</u>
Հասարակական կապերի գծով ծախսեր	(250)	
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	(5272)	(4098)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	39	(40)
Ընդամենը	(5 561)	(4138)

Ծանոթագրություն 11. «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից գուտ շահույթ(վնաս)»

<u>Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից գուտ եկամուտ</u>	<u>Հաշվետու ժամանակաշրջան</u>	<u>Նախորդ ժամանակաշրջան</u>
Ընդամենը		

➤ **Ծանոթագրություն 12. «Շահութահարկի գծով ծախս»**

Ծանոթագրություն 12-ում բացահայտվում են ընթացիկ տարվա շահութահարկի և հետաձգված հարկի գծով ծախսի հանրագումարը և ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտով պահանջվող բացահայտումները:

Համաձայն ՀՀՄՍ 34-ի՝ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է յուրաքանչյուր միջանկյալ ժամանակաշրջանում՝ հիմնվելով հաշվետու տարվա տարեկան շահութահարկի կշռված միջին դրույթի լավագույն գնահատականի վրա: Որևէ միջանկյալ ժամանակաշրջանի շահութահարկի գծով ծախսի հաշվարկված գումարները կարող են կարիք ունենալ ճշգրտվելու տվյալ ֆինանսական տարվա հաջորդ միջանկյալ ժամանակաշրջանում, և այդ գումարները բացահատվում են այս ծանոթագրությամբ:

<u>Շահութահարկի գծով ծախս</u>	<u>Հաշվետու ժամանակաշրջան</u>	<u>Նախորդ ժամանակաշրջան</u>
Ընթացիկ հարկի գծով ծախս	12 783	2 875
Ընդամենը	12 783	2 875

Ծանոթագրություն 12-ում բացահայտվում է նաև՝

3.12.1 Համաձայն ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքի շահութահարկի գումարը հարկվող գումարի նկատմամբ հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով,

3.12.2 շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	Հաշվետու ժամանակաշրջան	Արդյունավետությունը աչառակի (%)	Նախորդ ժամանակաշրջան	Արդյունավետությունը աչառակի (%)
Շահույթը մինչև հարկումը	257 966	-	15 998	-
Շահութահարկ` դրույքաչափով	-	20	-	20
Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով	-	-	-	-
Չհարկվող եկամուտներ	194 048	-	7 626	-
Չնվազեցվող ծախսեր	-	-	-	-
Նախորդ տարվա հաշվարկված հահտային ծախսի ճշտում	-	-	-	-
Շահութահարկի գծով ծախս	12 783		2 875	

3.12.3. Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի դրությամբ	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ
Հիմնական միջոցների գծով	581	581		-
Չուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	581	581		-

Ծանոթագրություն 14 «Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»

Ծանոթագրություն 14-ի տարրերն են

3.14.1 «Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»

«Ալֆասերքյուրիթիզ» ՍՊԸ-ն կանխիկ դրամական միջոցների մնացորդը առ 31.12.2013թ.չունի:

3.14.2. «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, որոնք ներառվում են դրամական հոսքերի մասին հաշվետվությունում:

Այս ծանոթագրությամբ բացահայտվում են «Դրամական հոսքերի մասին հաշվետվության» մեջ «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում/վերջում» տողերում ներառված հոդվածները:

Ծանոթագրություն 15. «Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

Ծանոթագրություն 15-ի տարրերն են՝

Ընթացիկ հաշիվներ

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ բանկերում	28 218	20 296
Դեպոնացված հաշիվներ բանկերում	120	131
Ընդամենը	28 338	20 427
Բանկերում՝ վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ	504 656	108 204
ռեպո (հետգնման) համաձայնագրեր		

Ներդրումային և այլ ֆինանսական կազմակերպություններում

վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ

ռեպո (հետգնման) համաձայնագրեր

128 335

արժեթղթերի փաթեթի կառավարում

այլ

Հաշվեզրված տոկոսներ

211

770

Ընդամենը

633 202

Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)

()

()

Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

661 540

129 401

31-ի Դեկտեմբերի 2013թ. «Ալֆասերքյուրիթիզ» ՍՊԸ-ի ընթացիկ հաշիվների ընդհանուր գումարը ՀՀ բանկերում կազմում է 28 218 հազար ՀՀ դրամ և այն օգտագործման որևէ սահմանափակման առկայություն չկա :

Ծանոթագրություն 16. «Պահանջներ հաճախորդների նկատմամբ»

Պահանջներ հաճախորդների նկատմամբ

**Հաշվետու
ժամանակաշրջան**

**Նախորդ
ժամանակաշրջան**

Ընդամենը զուտ պահանջներ

Ծանոթագրություն 17. «Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրականա արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ»

Ծանոթագրություն 17-ի տարրերն են՝

Պետական արժեթղթեր

**Հաշվետու
ժամանակաշրջան**

**Նախորդ
ժամանակաշրջան**

ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝

գանձապետական պարտատոմսեր

1 250 478

կենտրոնական բանկի պարտատոմսեր

այլ

Ընդամենը պետական արժեթղթեր

1 250 478

ՀՀ ոչ պետական արժեթղթեր

**Հաշվետու
ժամանակաշրջան**

**Նախորդ
ժամանակաշրջան**

Ընդամենը ՀՀ ոչ պետական շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր

Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր

**Հաշվետու
ժամանակաշրջան**

Նախորդ ժամանակաշրջան

ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի

երկարաժամկետ պարտքային գործիքներ

11 632

կարճաժամկետ պարտքային գործիքներ

կապիտալի գործիքներ

այլ

Ընդամենը ա շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր

1 262 110

Ընկերության շուկայական վերլուծությունները և հեռանկարում երկարաժամկետ ներդրումներ կատարելու որոշումները հաշվետու ժամանակահատվածում հանգեցրել են « Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող» արժեթղթերի վերադասակարգման: Մասնավորապես հաշվի առնելով ՀՀ Պետական Պարտատոմսերի տոկոսադրույքների համեմատական անկման հանգամանքը նախորդ ժամանակահատվածների համեմատ, որը չի հանգեցնում Պետական Պարտատոմսերի կարճաժամկետ առք ու վաճառքից շահույթի ստացման:

Ծանոթագրություն 18. «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ»

Ծանոթագրություն 18-ի տարրերն են՝

<u>Պետական արժեթղթեր</u>	<u>Հաշվետու ժամանակաշրջան</u>	<u>Նախորդ ժամանակաշրջան</u>
ՀՀ պետական պարտատոմսեր		
զանձապետական պարտատոմսեր		
կենտրոնական բանկի պարտատոմսեր	2 736 000	1 670 459
այլ		
	2 736 000	1 670 459
Ընդամենը պետական արժեթղթեր		
	2 736 000	1 670 459
Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		

Հաշվետվու ժամանակաշրջանում «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների» դասը կազմել է անվանական արժեքով 2 736 000 հազ. դրամ: Ռեպո-համաձայնագրերով վաճառված արժեթղթերի գումարը կազմել է 2 462 054 հազ. դրամ : Ռեպո-համաձայնագրերը կնքվել են ՀՀ ռեզիդենտ բանկերի հետ:

Ծանոթագրություն 19. «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ»

Ծանոթագրություն 19-ի տարրերն են՝

Պետական արժեթղթեր

**Հաշվետու
ժամանակաշրջան**

**Նախորդ
ժամանակաշրջան**

ՀՀ պետական պարտատոմսեր, այդ թվում՝

գանձապետական պարտատոմսեր

1 211 789

1 116 537

կենտրոնական բանկի պարտատոմսեր

այլ

Հաշվեգրված տոկոսներ

1 211 789

1 116 537

Ընդամենը պետական արժեթղթեր

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ-» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի, այդ թվում՝

երկարաժամկետ պարտքային գործիքներ

կարճաժամկետ պարտքային գործիքներ

այլ

1 838

ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի, այդ թվում՝

20 000

20 000

երկարաժամկետ պարտքային գործիքներ
կարճաժամկետ պարտքային գործիքներ

ավանդային հավաստագրեր

այլ

Հաշվեգրված տոկոսներ

509

517

22 347

20 517

Ընդամենը

Զուտ ներդրումներ մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներում

1 234 136

1 137 054

Հաշվետվու ժամանակաշրջանում Ընկերության «Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների» դասը կազմում է 1 234 136 հազ. դրամ: Ռեպո-համաձայնագրերով վաճառված արժեթղթերի գումարը կազմել է 1 202 927 հազ. դրամ : Ռեպո-համաձայնագրերը կնքվել են ՀՀ ռեզիդենտ բանկերի հետ:

Աուդիտ Սերվիս աուդիտորական խորհրդատվական ընկերություն, ՎՏ, Երևան, Խորոնացի 47/7, բն.46,
հեռ/ֆաքս 577 544, email: info@auditservice.am, <http://www.auditservice.am>

Ծանոթագրություն 20. «Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում» - հաշվետու տարում այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ չեն արվել:

Ծանոթագրություն 21. «Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Ծանոթագրություն 21-ի տարրերն են՝

Հիմնական միջոցներ

Հոդվածի անվանումը	Շենքեր	Համակ. և կապի միջոցներ	Փոխադրա-միջոցներ	Այլ հիմն. միջոցներ	Հիմն.միջ. գծով կապ. ներդ.	Վարձակ. հիմն.միջ. գծով կապ. ներդ.	Ընդամենը
Սկզբնական արժեք		2002	12870	4062			18934
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	-	-	-	-	-	-	-
Ավելացում	-	1710	-	-	-	-	1710
Օտարում	()	()	()	()	()	()	()
Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	-	3702	12870	4062			20644
Ավելացում	-	-	-	-	-	-	-
Օտարում	()	(983)	()	(4062)	()	()	(5045)
Վերագնահատում*	-	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-

Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	-	-	-	-	-	-	-
--	---	---	---	---	---	---	---

<< Ալֆասերքյուրիթիզ >> ՄՊԸ 2013թ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

Կուտակված		(3974)	(6864)	(2123)			(12961)
մաշվածություն							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	-	-	-	-	-	-	-
Ավելացում	-	-	-	-	-	-	-
Օտարում	()	()	()	2123	()	()	()
Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	-	-	-	-	-	-	-
Ավելացում	-	-	-	-	-	-	-
Օտարում	()	1806		()	()	()	()
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
Մնացորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	-	(2168)	(6864)	-	-	-	(9032)
Զուտ հաշվեկշռային արժեք		551	6006	0			6557

Ոչ նյութական ակտիվներ

	Համա- կարգչա- յին ծրագրեր	Լիցենզիա- ներ և վստա- հագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապ. ներդ.	Ընդամենը
Սկզբնական արժեք	198					198
Կուտակված մաշվածություն	79					79
Չուտ հաշվեկշռային արժեք	119					119

Ծանոթագրություն 23. «Այլ ակտիվներ»

Դերիտորական պարտքեր և կանխավճարներ

Հաշվետու
ժամանակաշրջան

Նախորդ
ժամանակաշրջան

Դերիտորական պարտքեր բյուջեի գծով

34

Դերիտորական պարտքեր մատակարարների գծով

57

Կանխավճարներ աշխատակիցներին

56

Կանխավճարներ մատակարարներին

865

Կանխավճարներ բյուջեի և պարտադիր
սոցիալական ապահովագրության վճարների գծով

1 134

526

Այլ դերիտորական պարտքեր և կանխավճարներ

611

Ընդամենը

2 055

1228

Ծանոթագրություն 24. «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

Ծանոթագրություն 24-ի տարրերն են՝

Ներգրավված փոխառություններ և ավանդներ, այլ

Հաշվետու
ժամանակաշրջան

Նախորդ
ժամանակաշրջան

ՀՀ կենտրոնական բանկ

ավանդներ և փոխառություններ

ռեպո համաձայնագրեր

այլ

ՀՀ բանկեր

ավանդներ և փոխառություններ

ռեպո համաձայնագրեր

3 796 836

3 577 347

այլ

201 790

Հաշվեդրված տոկոսներ

8 954

10 295

Ընդամենը

3 805 790

3 789 432

Հաշվեդրված տոկոսներ

Ընդամենը

Ընդամենը պահանջներ բանկերի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

3 805 790

3 789 432

Ծանոթագրություն 25. «Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ»

Ծանոթագրություն 29. «Պահուստներ»

Ծանոթագրություն 29-ում բացահայտվում են հաշվետու ժամանակաշրջանում պահուստների շարժը.

Գլխավոր Պահուստե

Ծանոթ.

**Հաշվետու
ժամանակաշրջան**

**Նախորդ
ժամանակաշրջան**

Սկզբնական մնացորդ

7

15 000

7 000

Պահուստին կատարված մասհանումներ

8 000

Պահուստի օգտագործում

Պահուստին կատարված գուտ
մասհանումներ

Վերջնական մնացորդ

15 000

15 000

29.1 Ներդրումային ընկերության իրավական պարտավորությունները

Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում և իր իրավական պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

3.29.2 Ներդրումային ընկերության հարկային պարտավորությունները

